

**ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ,
ETHNOGRAPHY AND FOLKLORE,
ЭТНОГРАФИЯ И ФОЛЬКЛОР**

**ԱՐՑԱԽԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅԱՆ
ԺԱՆՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՈՒՐՋ ***

ՀՏԴ 398

DOI: 10.52063/25792652-2025.1.24-170

ՄԵԼԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության,
ազգագրության ինստիտուտի բանահյուսության և
տեքստաբանության բաժնի ավագ լաբորանտ,
ք. Արտաշատ, Հայաստանի Հանրապետություն

Petrosyanmeline90@gmail.com

ORCID: 0009-0000-9540-8567

Հոդվածի նպատակն է քննության ենթարկել և հստակ դասակարգել հայ ժողովրդական բանահյուսության մաս կազմող՝ Արցախի մանկական բանահյուսության ժանրային կառուցվածքը, որը ինչպես ընդհանուր, այնպես էլ հայ բանագիտության մեջ մշտապես որոշակի տարակարծությունների տեղիք է տվել: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մանկական բանահյուսությունը հայ իրականության մեջ քիչ է ուսումնասիրված:

Հետևելով ռուս և հայ բանագետների կատարած հետազոտություններին և հիմք ընդունելով տարիքային հաջորդականության մոդելը՝ սույն հոդվածում փորձ է արվել առաջին անգամ դասակարգելու և քննության ենթարկելու համահայկական բանագիտության մաս կազմող Արցախի մանկական բանահյուսության ժանրային կառուցվածքը:

Հետևաբար՝ նպատակահարմար ենք գտել նյութի ուսումնասիրության համար մեթոդական հիմք ընդունել ռուս բանագիտական մտքի ձեռքբերումները, որտեղ մանկական բանահյուսության դասակարգումը կատարվել է կա՛մ բովանդակային, կա՛մ տարիքային հաշվառման երկու՝ միանգամայն տարբեր մեթոդներով: Տեղայնացնելով ռուս հետազոտողների փորձը՝ տարիքային հաշվառման հատկանիշը հայ իրականության մեջ առաջին անգամ կիրառել է բանագետ Ռոզա Գրիգորյանը:

Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել արխիվային ու տպագիր նյութերը, դաշտային բանահյուսական նմուշները:

Հետազոտության արդյունքում առաջարկվել է ներքոհիշյալ դասակարգումը. ա) մանկատաճության երգեր, բ) մանկապահպան, չարահալած երգեր, գ) մանկական խոսվածք, ծածկալեզու, դ) խաղերգեր, ե) մտավարժական, խոսքավարժական խաղեր:

* Հոդվածը ներկայացվել է 14.11.2024թ., գրախոսվել՝ 14.12.2024թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Հիմնաբառեր՝ Արցախ, մանկական բանահյուսություն, ժանրային դասակարգում, մեթոդ, կառուցվածք, բանահավաք, մանկահասակներ, մեծահասակներ:

Ներածություն

Մանկական բանահյուսության ժանրային դասակարգման խնդիրը դիտարկվում է նախ և առաջ երկու կարևորագույն նախապայմանով՝ բուն հասկացության սահմանների որոշմամբ և ժանրային համակարգի կառուցվածքով: Յուրաքանչյուր ժանր ունի նախապատմություն: Կան ժանրեր, որոնք ծնունդը կապվում է մարդկության հիշողության մտավոր սկզբին, և կան ժանրեր, որոնք նորաստեղծ են, նախատեսված են երեխաներին զվարճացնելու, ճիշտ կողմնորոշելու համար:

Հայ իրականության մեջ առաջին անգամ հիմք ընդունելով ռուս բանագիտության ձեռքբերումները՝ Ռոզա Գրիգորյանը ընդունելի է համարել հայտնի բանագետ Օլգա Կապիցայի դասակարգման մեթոդը: Սակայն մինչ օրս բանագիտության մեջ շարունակում են գոյակցել երկու հակադիր տեսություններ: Առաջինը տարիքային մոդելն է, երկրորդը՝ բովանդակային:

Օ. Կապիցան կիրառել է տարիքային հաջորդականությամբ պայմանավորված դասակարգման մոդելը: Մանկական բանահյուսական նմուշները բաժանելով 2 խմբի՝ նա առաջին խմբում զետեղել է մեծերի կողմից ստեղծված մանկատածության երգերը (օրորոցայիններ, գովքի, խայտանքի), որոնք նախատեսված են 0-6 տարեկան մանուկների համար: Երկրորդ խմբի ստեղծագործությունների հեղինակներն ու կրողները բացառապես երեխաներն են:

Գեորգի Վինոգրադովն առաջնորդվել է մեկ սկզբունքով՝ ով է մանկական բանահյուսության կրողը: Նա անընդունելի է համարել մանկատածության երգերը մանկական բանահյուսության մաս համարելը. «Դա կնոջ, մոր, դայակի ստեղծագործություն է, այն, որ դրանք կատարում են փոքրիկները, չի նշանակում, որ մանկական են, ինչպես որ երեխաների կողմից զինվորական երգերի կատարումն իրավունք չի տալիս զինվորական երգերը ներառելու մանկական բանահյուսության մեջ՝ մինչև դուրս չման մեծերի բանահյուսությունից և չդառնան մանկական բանահյուսության սեփականություն (Виноградов 66):

Օ. Կապիցան հակադարձել է՝ նշելով, որ հակված չէ առանձնացնելու մանկական բանահյուսության առաջին խմբի ստեղծագործությունները՝ բացառությամբ լիրիկական բովանդակությամբ երգերի. «Այն, ինչ ընկալվում ու հեշտորեն յուրացվում է երեխաների կողմից՝ համապատասխանելով նրանց կարիքներին ու հետաքրքրություններին, պահպանվում ու փոխանցվում է սերնդեսերունդ՝ դառնալով մանկական բանահյուսության մաս» (Капица 4):

Ջենոթյան առարկա խնդրին անդրադարձել է նաև Վլադիմիր Անիկինը: Նա մանկական բանահյուսության դասակարգման համակարգը կառուցել է Օ. Կապիցայի առաջարկած սկզբունքով՝ առանձնացնելով մանկական ստեղծագործությունների երեք խումբ՝

1. Մեծահասակների ստեղծագործություններ երեխաների համար,
2. Մեծահասակներից ժառանգորդած ստեղծագործություններ,
3. Ստեղծագործություններ, որոնք երեխաներն են ստեղծել (Аникин 88):

Դրանց շրջանակում նա դիտարկում է առանձին ժանրեր և տեսակներ: Օ. Կապիցայի դասակարգման սկզբունքի հետևորդ է նաև Վիկտոր Վասիլենկոն: Վասիլենկոն առաջարկել է դասակարգման ֆունկցիոնալ սկզբունք՝ առանձնացնելով տեքստերի խմբերն՝ ըստ խաղային տարրերի առկայության.

1. Օրորոցայիններ կամ հեքիաթներ,
2. Խաղային գործողությունների հետ կապված ստեղծագործություններ,

3. Ստեղծագործություններ, որոնք գրավում են երեխաներին և կատարվում են անկախ խաղային գործողություններից (Василенко, 132):

Ավստրալիացի Է. որ խաղային հիմքը կարելի է նկատել մանկական բանահյուսության բոլոր ժանրերում: Խաղը երեխաների աշխարհընկալման կարևոր գործառնություններից է:

Տարածաժամանակային բազմաթիվ առանձնահատկություններ փաստում են խաղի հին ու ավանդական լինելը. «Խաղն ավելի հին է, քան մշակույթը, ինչքան էլ թերի լինի, այս սահմանումն ի հայտ է եկել մարդկային հասարակության հետ, մինչդեռ կենդանիների մոտ խաղն առկա էր դեռ վաղուց՝ առանց մարդու միջամտության» (Հայզհիզա 6):

Ինչպես էլ կարևորենք խաղի դերը և կենցաղավարումը երեխաների կյանքում, միևնույն է, մանկական բանահյուսության դասակարգումը խաղային և ոչ խաղային՝ գիտական հիմնավորվածություն չունի ժանրային բարդ համակարգում:

Վերոնշյալ խնդրին անդրադարձել է Նաև Միխայիլ Մելնիկովը, որի առաջարկած դասակարգման սկզբունքի հիմքը Վիտգորադովի դասակարգումն է, սակայն Մելնիկովը հաշվի է առել երեխաների տարիքային հաջորդականության սկզբունքը: Նա առանձնացրել է մանկական բանահյուսության ինքնուրույն ժանրեր՝ դաստիարակչական պոեզիա, կենցաղային բանահյուսություն, զվարճախոսական բանահյուսություն, խաղային բանահյուսություն (Мельников 11):

Ուսումնասիրելով մանկական բանահյուսության դասակարգման առկա մեթոդները և հետևելով Օ. Կապիցայի դասակարգման սկզբունքներին՝ մենք նպատակահարմար ենք գտնում Արցախի մանկական բանահյուսությունը ներկայացնել տարիքային դասակարգման սկզբունքով, քանի որ «տարիքային շրջաբաժանման հիմքում դրվում են երեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման օրինաչափություններն ու նրանց անհատական առանձնահատկությունները» (Հարությունյան Գ., Աղաբեկյան, Բաղդասարյան 51):

Արդի մանկավարժության մեջ ընդունված է տարիքային հետևյալ շրջաբաժանումը.

1. Մինչև խաղալողացական տարիք՝ 0-3 տարեկան: Այս տարիքին բնորոշ են մանկատածության, մանկապահպան, չարահալած երգերը, մանկական խոսվածքը, ծածկալեզուն, ինչպես նաև որոշ խաղերգեր:

2. Նախալողացական տարիք՝ 3-7 տարեկան. այս տարիքային բաժանումն առավելապես ընդգրկում են խաղերգերը, հեքիաթները:

3. Դպրոցական տարիք՝ 6-18 տարեկան: Դպրոցական տարիքի երեխաների շրջանում լայն տարածվածություն ունեն խաղերգերը, մտավարժական, խոսքավարժական երգերը:

Մանկական բանահյուսության դասակարգման համակարգը բնութագրելիս մյուս լրացույց խնդիրը ընդհանուր գիտական եզրութաբանության բացակայությունն էր: Բանահավաքները հաճախ օգտագործում էին բանասացների կողմից տրվող անվանումները՝ օրորոցայինները՝ նանիկ-նանիկ, բայուշկի, նայ-նայ, լայ-լայ, զվարճախոսությունները՝ պընզը, հաշվերգերը՝ հաշվելուկ, հեքիաթները՝ նաղ: Հայ իրականության մեջ Ռ. Գրիգորյանն առաջինն էր, որ հիմք դրեց մանկական բանահյուսության գիտական տերմինաբանությանը: Ռ. Գրիգորյանի առաջարկած գիտական եզրություններն հիմնավորված են և հստակորեն սահմանված:

Համացանցի և գիտատեխնիկական առաջընթացի ներկա ժամանակներում, թեև նախկին ոգևորությամբ բանահյուսական նմուշներ չեն ստեղծվում, բայց դաշտային հետազոտական կյուրթերով հաստատվում են, որ երեխաների միտքն ու երևակայությունը շարունակում են արձագանքել հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալական, քաղաքական տարբեր իրադարձություններին. օրինակ՝ Արցախի երեխաների «Պատերազմական խաղերը», «Թավշյա հեղափոխության» արձագանքները, «Կորոնավիրուս» համավարակով պայմանավորված խաղերը և

այլն: Բնականաբար, կարևորվում են նաև բակային-խաղային տարածքների կրճատման, ժամանակակից տեխնոլոգիաների ու նոր խաղալիքների ազդեցությունը խաղացողների մտածողության, ստեղծագործական կարողությունների վրա:

Բանահավաքչական աշխատանքների շրջանակներում մեզ հաջողվել է գրառել Արցախի մանկական բանահյուսության նոր նմուշներ, որոնք էլ տպագիր նմուշների հետ տարիքային հաջորդականությամբ դասակարգել ենք հետևյալ խմբերով՝ ժանրային նկարագրերի հակիրճ բնութագրությամբ.

1. 0-1.5 տ. մանկատածության երգեր,
2. 0-3 տ. մանկապահպան, չարահալած երգեր,
3. 1.5 -3տ. մանկական խոսվածք, ծածկալեզու,
4. 3-9 տ. խաղերգեր, մանկական հեքիաթներ
5. 6-12 տ. մտավարժական, խոսքավարժական խաղեր:

Մանկատածության երգերն ընդգրկում են օրորոցայինները, մանկախաղաց երգերը: *Օրորոցայինները* մանկական բանահյուսության քնարական ժանրի հնագույն տեսակներից են, կատարվում են մայրերի կողմից երեխաներին հանգիստ քուն բերելու մտայնությամբ: Օրորոցայինների կառուցվածքային առանձնահատկություններից կարևորագույնը կրկներգն է: Արցախի օրորոցայիններում կրկներգերն ունեն հետևյալ բանաձևումները. «նանիկ-նանիկ», «օրոր-օրոր», «բայ-բայ», «բայուշկի-բայուշկի», «քոնիլ-քոնիլ»:

Լօք տաս սարեն, լօք տաս բարեն,

Քեզ ծառայի հարուր տարեն,

Գյուրգըդ տըռօզ, ջուբըդ տըռօզ,

Թօշդ տռօզ իմ բալա:

Օրոր, օրոր իմ բալա (Հարությունյան Լ, 39):

Մեկ այլ օրորոցայինում «բայ-բայ» կրկներգային միավորը միանգամայն բացահայտում է օրորի գլխավոր գործառնությունը, այն է՝ խաղաղ ու հանգիստ պայմաններում ապահովել երեխայի քունը:

Բայ-բայ անե իմ աշխարս,

Տոնս, տեղս, քաղցըդ պերքս,

Վեր շուտ ծիլիս տնվերվիս,

Դինջ, երջանիկ, Էրկան ապրիս (Պետրոսյան 11)

Մանկախաղաց գովքի երգերն ասվում են երեխաներին զբաղեցնելու, գովելու, ձեռքերի վրա խաղացնելու նպատակով: Մանկախաղաց գովքի երգերը ավանդական ընտանիքներում տատիկներին է վերապահված: Կառուցվածքային պարզությունը և գովքի նպատակամետ ուղղվածությունը երգին հաղորդում են ամբողջական և ավարտուն նկարագիր և տարբերակում այն սյուլեթտային ընդարձակ կառուցվածք ունեցող օրորոցայիններից (Գրիգորյան 69):

Պապար-պապար իմ բալա,

Ծաղկած կապար իմ բալա,

Վեսկե լալա, իմ բալա,

Շաթալ կյործիմ ու քոշիկ,

Թագիկ տինիմ կոկոշիդ,

Հոպ- հա ծածառ, իմ բալա,

Հոպ- հա պապար, իմ բալա (Հարությունյան L 168):

Մաղթանքների առկայությունը գովքի երգերի բնորոշ հատկանիշներից է: Այն փոքրիկներին պաշտպանում է չար ուժերից և կենսունակություն ու աշխուժություն հաղորդում նրանց:

Վենսետ տակեն փոշ չի փըսնե,

Ծերքետ յիրա թօզ չի նըստե,

Աստուծ միշտ քու հակետ ինի,

Բաղ ու բախճատ ծաղկավ հիննի (Պետրոսյան 17):

Մանկապահական չարահալած երգերը մանուկների կյանքի, պահպանությանն ուղղված մայրական աղերսերգեր են: Ծիսական ու բնության պաշտամունքին ուղեկցվում են այնքանով, որքանով ուղղված են մանուկներին: Մանկական բանահյուսության մանկապահական, չարահալած երգերից են բնության և երկնային լուսատուներին նվիրված երգերը, որոնք լայն կենցաղավարում են ունեցել երեխաների միջավայրում, օրինակ՝ «Լուսնինգա, լուսնինգա, տու իմ հօր պահե, վեր ինքն էլ կյա ինձ պահե» (Պետրոսյան 33): Այս պարզունակ տողերի մեջ թաքնված է մի ամբողջ ծիսահմայական պատկեր՝ շաղկապված ժողովրդական մտածողությանն ու հավատալիքներին: Այսօր մոռացության են մատնված վերոնշյալ կենցաղավարման տարրերը, նոր սերնդի համար խրթին ու անհասկանալի են, իսկ երեխաները պահպանում են այն, ինչն իրենց համար ընկալելի ու հետաքրքիր է:

Մանկական խոսվածքը երեխայի գիտակցական առաջին թոթովանքների արտահայտումն է տարբեր հնչյունների, երկհնչյունների, հետազայում նաև բառանմանակումների, բառատիպերի միջոցով: Տարիքային փոփոխության հետ հարստանում ու զարգանում են երեխաների մտավոր ունակություններն ու բառապաշարը: Արդեն երեխան կարողանում է մտքի և խոսքի համադրությամբ արտահայտել իր ցանկությունը:

Մանկական ծածկալեզուն բառադարձության, հնչյունափոխության կամ բաղաձայնների հավելումով կազմված կառույց է: Երեխաները ծածկալեզվի միջոցով փորձում են նմանվել կենդանիներին կամ թռչուններին՝ դրանց ձայնային նմանակումներն անելով:

Խաղերգերը բաժանվում են երեք խմբի՝

ա. Ձեռնախաղի երգեր,

բ. Հաշվերգեր,

գ. Ծաղրերգեր ու ձաղկերգեր:

Մանկական խաղալիքների բացակայության պայմաններում երեխաներին զբաղեցնելու, առօրյան հագեցնելու, մտավոր զարգացմանը նպաստելու նպատակով ստեղծված երգեր են դրանք: Հաշվերգերը վիճակախաղիկներ են, որոնք ասվում են խաղն սկսվելուց առաջ՝ խաղն առաջինը սկսելու կամ խմբի ավագ ընտրելու համար: Դրանք հանգավորված քառատող, վեցևյակ, ութևյակ, մեծ մասամբ մթաֆնված բովանդակությամբ, հնարովի կամ օտար բառակույտերից կազմված երգեր են, որոնք աչքի են ընկնում իրենց շարժունակությամբ ու կենսականությամբ (Գրիգորյան, 95): Հաշվերգերը լինում են երկու տեսակի՝ օտարալեզու, անիմաստ բառակույտերից կազմված երգեր, որոնք առավել զվարճալիություն, աշխուժություն են պարգևում երեխաներին, իսկ մյուս մասն իմաստային մթաֆնում չունի, այն պարզ ու հասկանալի է թե՛ իր կառուցվածքով, և թե՛ բովանդակությամբ: Օտար բառախմբերից կազմված հաշվերգերից Արցախում առավել հայտնի են «Ալա-բալա Նիցա», «Ցան, ցան, ցան» «Գիշտի-գիշտի»:

Ալլա, բալա Նիցա,

Դուսկա բանիցա,

Հեյ գիդի վանչո,

Նաշ կապիտանչո,

Փալանչո (Պետրոսյան 49):

Ծաղրերգերն ու կատակերգերը միտված են երեխաներին ուրախություն, զվարճանք, սրամտելու և ճիշտ կողմնորոշվելու հատկություն պարգևելուն: Ծաղրերգի նյութ են հանդիսանում մարդու արտաքին թերությունները, բնավորության բացասական գծերը, մանկական անունների զավեշտական բառախաղերը: Արցախում վերոնշյալ հատկանիշներն ունեն իրենց բնորոշ ծաղրերգերը: Օրինակ լայն տարածվածություն ունի անունների՝ մանուկների կողմից հատկանունների ճիշտ արտաբերելու և զավեշտական բառախաղերի վերածելու գործընթացը. *Ազատ՝ քարը տամ կնդազատ* (Սարգսյան 626), *Չավեն՝ թօխը տինիմ ծեր հավեն* (Սարգսյան 627):

Մանկական հեքիաթների միջոցով ժողովուրդը երեխաների մեջ սերմանում է չարի նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն ու երգիծանքի ողջ ուժով ծաղրի ենթարկում նրանց: «Վըրցակեն շեն քցիլը» հեքիաթը մանկական լսարանի համար հորինված հեքիաթ է: Շունն ու աքլորը, հեռանալով իրենց տիրոջից, որոշում են ուրիշ վայրում գյուղ կառուցել և այնտեղ խաղաղ ապրել: Ճանապարհին մուլն ընկնում է, և նրանք ստիպված որոշում են գիշերել անտառում: Գիշերվա կեսին աղվեսն աքլորի ձայնը լսելուն պես ուրախանում է՝ մտածելով, որ կեր ունի: Աղվեսը աքլորին առաջարկում է գիշերել իր մոտ, սակայն աքլորը մերժում է՝ ասելով, որ իր ընկերն էլ պիտի համաձայնի: Աղվեսը կարծում է, որ աքլորի ընկերը հավ պիտի լինի և ազահաբար մոտենում է թփին. այդ պահին շունը հարձակվում է, և աղվեսը, լեղապատառ փախչելով, գոռում է. «Ըստեղեք վեր տուք շեն քըցիք, վեշ մինըն էտ շենումը կենալ չի» (Հայ ժողովրդական հեքիաթներ 219): Այստեղ տեսնում ենք պարտված ու ծաղրի մատնված աղվեսին, որը խորհրդանշում է չարի վերջը:

Մտավորական խաղեր (հանելուկ, շուտասելուկ): Հանելուկը մարդու մտավոր ունակությունները զարգացնող, բանականությունը մարզող մտախաղ է (Հարությունյան Ս. 5): Արտահայտչական հակիրճությամբ ու պարզությամբ առանձնացող բանահյուսական այս ժանրը նպաստում է ոչ միայն երեխաների

աշխարհաճանաչողությանն ու մտավոր զարգացմանը, այլև բառապաշարի հարստացմանն ու երևակայական մտածողության ձևավորմանը:

Ինքը հորումը,
Քյաքուլը չօլումը (Սարգսյան 574):
(բողկ)

Օխտը հալավ՝
Ինքը մաչին,
Հանե՛ լացիլ (Հարությունյան L. 118):
(սոխ)

Շուտասելուկները դժվարահունչ բառերի ու բառակապակցությունների կամ նույն արմատի կրկնությամբ, միատառ, երկտառ, ծավալուն և ոչ ծավալուն կառույցի ստեղծագործություններ են, որոնք կատարվում են խիստ լարվածությամբ՝ չսխալվելու և ծիծաղելի վիճակում չհայտնվելու համար (Ղռեջյան, Բագոյան 234): Բովանդակային ու կառուցվածքային առումով ծիծաղահարույց այս նմուշները երեխաների մեջ մրցախաղի ու զվարճանքի սեր են արթնացնում: Օրինակ՝ «Դերին ճրին ծորումը դերին ճորուն ճուլը ծոռ» (Հարությունյան L 105), «Մոկունը քցիմ ծուկունը օտիմ, ծուկունը քցիմ ծուկունը օտիմ» (Հարությունյան L. 105), «Մեղդավ լիգլը փարչը յեր կալավ փախավ արչը» (Սարգսյան 625):

Եզրակացություններ

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել.

1. Ուսումնասիրելով հայ և ընդհանուր բանագիտության մեջ առկա ժանրային դասակարգման գիտական սկզբունքներն ու տեսությունները՝ կատարել ենք Արցախի մանկական բանահյուսության տպագիր և անտիպ ժառանգության՝ տարիքային հաշվառման հատկանիշով դասակարգում՝ նախընտրելով տվյալ մեթոդաբանության շրջանակներում կյուբի առավել համապարփակ ներկայացվածության հնարավորությունը:

2. Ժանրային խմբավորումները և բնութագրերը ներկայացնելիս կարևորել ենք խնդրին վերաբերող մանկավարժության, հոգեբանության, մշակութաբանության ոլորտների ուսումնասիրության պրակտիկաները:

3. Արցախի մանկական բանահյուսության ժանրային դասակարգումն ու հրապարակումը կարող են մեծապես նպաստել բանահյուսության տվյալ տեսակի գիտական շրջանառությանն ու հանրահռչակմանը:

4. Բանահյուսական տարբերակները հնարավորություն կունենան արձանագրելու ժամանակի մեջ բանավոր մշակույթի կրած բնականոն փոփոխությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան, Ռոզա. *Հայ մանկական բանահյուսություն*. ՀՀ ԳԱԱ Դնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2002, 183 էջ:

2. Հայգինգա, Յոխան. *Homo ludens*. Երևան, 2007, 384 էջ:

3. Հարությունյան, Գրիգորի, Աղաբեկյան, Ռոբերտ, Բաղդասարյան, Էլադա. *Դասախոսությունների դասընթաց մանկավարժությունից*. Ստեփանակերտ, 2011, 495 էջ:

4. Հարությունյան, Լևոն. *Նշխարներ Արցախի բանահյուսության*. Ստեփանակերտ, Դիզակ պյուս, 2009, 383 էջ:

5. Հարությունյան, Սարգիս. *Հայ ժողովրդական հանելուկներ*. Երևան, 1965, 389 էջ:

6. Խմբ. Արրահամյան, Սերգեյ. *Հայ ժողովրդական հեքիաթներ*. հ.7, Երևան, 1979, էջ 219:
7. Ղեկքյան, Լուսինե, Բագոյան, Արմեն. *Մանկական բանահյուսությունը Գավառի տարածաշրջանում*. Արցախի էթնոտրոնային գրադարան, 2019, էջ 224-239:
8. Պետրոսյան, Մելինե. *ԴԲԱ*, տետր 1, 2021, թ. 11:
9. Պետրոսյան, Մելինե. *ԴԲԱ*, տետր 2, 2022, թ. 17:
10. Պետրոսյան, Մելինե. *ԴԲԱ*, տետր 1, 2021, թ. 49:
11. Սարգսյան, Արմեն. *Արցախի բանահյուսությունը*. Էդիթ Պրինտ, Երևան, 2015, 747 էջ:
12. Аникин, Владимир. *Русские народные пословицы, поговорки, загадки и детский фольклор*. 1957, 240 с.
13. Василенко, Виктор. *Детский фольклор, русское народное поэтическое творчество*. 1978, 527 с.
14. Виноградов, Георгий. *Детский фольклор и быт*. Иркутск, 1925, 85 с.
15. Капица, Ольга. *Детский фольклор*. Ленинград, 1928, 224 с.
16. Мельников, Михаил. *Русский детский фольклор*. Москва, 1987, 238 с.

WORK CITED

1. Anikin, V., Russkie narodniye poslovicey, pogovorki, zagadki I detskiy folklor, 1957g, 240 s. [Russian Folk Proverbs, Sayings, Riddles, and Children's Folklore], (In Russian)
2. Hay zhoghovrdakan heqiatner [Armenian Folk Tales], Yerevan, 1979, ej 219. (in Armenian)
3. Vasilenko,V, Detskiy folklor, russkoe narodnoe poeticheskoe tvorchestvo, 1978 g, 527 s. [Children's Folklore, Russian Folk Poetic Creation], (In Russian)
4. Vinogradov G, Detskiy folklor i byt, Irkutsk, 1925 g, 85 s.[Children's Folklore and Everyday Life], (In Russian)
5. Grigoryan, R, Hay mankakan banahyusutyun, HH GAA Hnagitutyun azgagrutyan institut, 2002, 183 ej. [Armenian Children's Folklore], (In Armenian)
6. Kapica O, Detskiy folklor, Leningrad, 1928 g, 224, [Children's folklore], (In Russian)
7. Melnikov M, Russkiy detskiy folklor, Moskva, 1987, 238, [Russian Children's folklore], (In Russian)
8. Meline Petrosyan, DBA, tetr 1, 2021, t. 11. (in Armenian)
9. Meline Petrosyan, DBA, tetr 2, 2022, t. 17. (in Armenian)
10. Meline Petrosyan, DBA, tetr 1, 2021, t. 49. (in Armenian)
11. Hayzinga, Y, *Homo ludens*, Erevan, 2007, 384 ej. (in Armenian)
12. Harutyunyan, L, Nshkharner Artsakhi banahyusutyun [Relics of Artsakh folklore], Stepanakert, Dizak plus, 2009, 383 ej., (In Armenian)
13. Harutyunyan G, Aghabekyan R, Baghdasaryan E, Dasahosutyunneri dasyntac mankavarzhutyunic [Course of Lectures on Pedagogy], Stepanakert, 2011, 495 ej., (In Armenian)
14. Harutyunyan S, Hay zhogovrdakan hanelukner [Folk Riddles], Erevan, 1965, 2015, 747 ej. (In Armenian)
15. Grejyan L, Bagoyan A, Mankakan banahyusutyuny Gavari taratsashrjanum [Children's folklore in Gavar Area], Artsakhi elektronayin gradaran, 2019, ej 224-239. (In Armenian)
16. Sargsyan A, Artsakhi banahyusutyuny [Artsakh's folklore], Edit print, Erevan, 2015, 747 ej., (In Armenian)

GENRE CLASSIFICATION OF THE CHILDREN'S FOLKLORE TRADITION OF ARTSAKH

MELINE PETROSYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Department of Folklore and Textology, Senior Laboratory Assistant, Artashat, the Republic of Armenia

The purpose of this article is to examine and clearly classify the genre structure of the children's folklore of Artsakh, which is part of Armenian folk literature — a subject that has always sparked certain disagreements in folkloristics. This is because children's folklore has been less studied as compared to other genres of folklore. The lack of sufficient research on children's folklore is particularly evident in Armenia.

Following the research conducted by Russian and Armenian folklorists, and based on the model of age-related sequence, this article attempts, for the first time, to classify and examine the genre structure of the children's folklore of Artsakh, which is part of the broader Armenian folkloristic tradition.

Therefore, in studying this material, we find it appropriate to base our methodological approach on the achievements of Russian folkloristics, where the classification of children's folklore has been carried out using two completely different methods: one based on content and the other on age-related criteria. Adapting the experience of Russian researchers, the age-related classification approach was first applied to the Armenian context by the folklorist Roza Grigoryan.

The study is based on archival and printed materials, as well as field-collected folklore samples. As a result of the analysis, the following classification is proposed: a) lullabies, b) nursery rhymes, including "evil-sounding" songs, c) children's speech and secret languages, d) play songs, e) intellectual and verbal games.

Keywords: *Artsakh, children's folklore, genre classification, methodology, structure, folklore collection, children, adults.*

ЖАНРОВАЯ КЛАССИФИКАЦИЯ ДЕТСКОЙ ФОЛЬКЛОРНОЙ ТРАДИЦИИ АРЦАХА

МЕЛИНЕ ПЕТРОСЯН

*старший лаборант отдела фольклора и текстологии
Института археологии и этнографии Национальной Академии наук РА,
г. Арташат, Республика Армения*

Цель статьи — рассмотреть и классифицировать жанровую структуру детского фольклора Арцаха, который является частью армянского народного творчества, и который, как в общем научном дискурсе, так и в армянской фольклористике, всегда вызывал определённые разногласия, связанные с недостаточной исследованностью детского фольклора в армянской культуре.

В данной статье, с опорой на исследования российских и армянских фольклористов и принятой за основу модели возрастной последовательности, впервые предпринимается попытка классифицировать и рассмотреть жанровую структуру детского фольклора Арцаха, который является частью армянской фольклористики.

Таким образом, для изучения материала была использована методологическая основа российской фольклористики, где классификация детского фольклора была проведена либо по содержанию, либо по возрастным признакам, т.е. двумя совершенно различными методами. Отмечается, что возрастной критерий впервые в армянской фольклористике использовала фольклорист Роза Григорян, применившая опыт российских ученых

В качестве предмета исследования использованы архивные и печатные материалы, полевые фольклорные образцы.

В результате исследования предложена следующая классификация:

а) песни о воспитании, также, связанные с воспоминаниями или событиями из жизни детей,

б) песни о наставниках,

в) песни, рассказывающие о негативных событиях или песни-предостережения,

г) песни, связанные с играми, которые исполняются во время детских игр, часто с элементами забавных действий,

е) развивающие, методические, словесные игры, направленные на развитие речи и мыслительных процессов детей, а также на улучшение их коммуникативных навыков.

Ключевые слова: *Арцах, детский фольклор, жанровая классификация, метод, структура, сбор фольклора, дети, взрослые.*